ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՏՈՆԻՆ
(2 ապրիլի 1994 թ.)

«Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրանց անտի և նստէր ի վերայ նորա» (Մատթ. ԻԸ 2):

«Եվ ահա մեծ շարժում եղավ, քանզի Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով, մոտենալով մի կողմ գլորեց վեմը դռան վրայից և նստեց նրա վրա»:

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Մատթեոս Ավետարանիչ այս սեղմ, երկու տողերով է արձանագրում բնութագրական ու նկարագրական կողմը այն եղելության, որը գալու էր հեղաշրջելու համայն մարդկությունը ոչ միայն սոսկ պատմական առումով, այլ նաև բարոյական, հոգեբանական, մշակութային և մարդկային կյանքը բնորոշող բոլոր ոլորտներով ու բնագավառներով: Մյուս ավետարանիչներն ընդհանրապես լռում են հարության դեպքի նկարագրական կողմի վրա, մինչ Մատթեոս այս երկու փոքրիկ տողերով է բավարարվում: Քանզի ավետարանիչների համար Քրիստոսի հրաշափառ Հարության դեպքը սոսկ ժամանակի մեջ կատարված պատմական իրողություն չէր, որը պետք էր նկարագրել, բնութագրել որպես այդպիսին: Քանզի Քրիստոսի Հարությունը տեղի ունեցավ խորհրդավոր, անքննելի, անիմանալի կերպով՝ Աստվածային ուժի և Աստվածային զորության ներգործությամբ, և այդ սեղմ տողերի հետևում թաքնված խորհուրդն այն է, որ Աստված, Ով ստեղծագործում էր ի սկզբանե, արարչության սկզբում և ոչնչից արարում էր ամեն ինչ, այն Աստված, Ով բազում անգամներ այցելության եկավ ժողովրդին Քրիստոսից առաջ, ցնցեց լեռները, ճեղքեց ծովը և փրկություն բերեց հրեա ժողովրդին, այդ նույն Աստված մեկ անգամ ևս ցուցադրում է Իր զորությունը՝ շարժելով երկրի հիմքերը և այնտեղից դուրս կորզելով մահվան դատապարտված Հիսուս Քրիստոսին՝ Նրան վերստին կյանք ու անմահություն շնորհելով: Եվ այս Հարության դեպքը Ավետարանիչների համար չի մնում լոկ պատմական մի արտահայտություն, այլ նրանց ուշադրությունը բևեռված և սևեռված է այդ Հարության նախորդող և այդ Հարության հաջորդող դեպքերի վրա, քանզի միայն նրանցով է պայմանավորված ու իմաստավորված Քրիստոսի հրաշափառ հարության ներքին խոր իմաստն ու բովանդակությունը:

Ովքեր այս վերջին շաբաթվա ընթացքում մեզ հետ միասին ապրեցին Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը, կարողացան հասկանալ ու ըմբռնել, թե ինչպես էր, որ Քրիստոս ընտրեց խաչի ճանապարհը՝ մարդկային մեղքը գամելով այնտեղ և, Գողգոթայի վրա իր արյունը թափելով, սրբեց ինչպես իր ժամանակի մարդկության, այնպես էլ գալիք բոլոր այն մարդկանց մեղքերը, ովքեր կհավատային և կգնային Իր ճանապարհով: Սակայն Քրիստոսի խաչելության խորհուրդը կմնար սոսկ մի առեղծված՝ մարդուն կսկիծ և սուգ պատճառող, եթե չլիներ Քրիստոսի Հարության դեպքը, քանզի տեսնում ենք, որ երբ Քրիստոսին ձերբակալեցին, այն աշակերտները, ովքեր երեք տարի շարունակ ապրում էին Երկնային Տիրոջ հետ և ունկնդրում էին Նրան, թողեցին ու փախան: Մինչև իսկ Պետրոս Առաքյալը, որ հպարտանում էր, թե ինքը ոչ մի ատյանի առաջ չի հրաժարվի Քրիստոսից, երեք անգամ ուրացավ նրան հրապարակավ, հաչս մարդկանց, որովհետև առաքյալների համար անհասկանալի ու անըմբռնելի էր, թե ինչպես Փրկիչը, ով եկել էր աշխարհը փրկելու, կարող էր մատնվել մարդկանց ձեռքը, խաչ բարձրանալ, մահվան դատապարտվել ու մահանալ: Երբ հուսահատության ու հուսալքության մեջ էին բոլոր աշակերտները, ինչպես նաև այն կանայք, ովքեր հետագայում առաջին ավետաբերները պետք է լինեին Քրիստոսի հրաշափառ Հարության, այս հուսահատության և հուսալքության ֆոնի վրա է, որ Քրիստոսի հրաշափառ Հարությունը գալիս է վերաիմաստավորելու այն բոլոր իրադարձությունները ու իրողությունները, որ կային մինչև այդ: Քրիստոսն իր հարությամբ խաչելությանը դատապարտում է խաչի, և մահանում է ինքը մահը՝ Նրա հարության սքանչելի ավետիսով:

Երբեք որևէ տրամաբանական կամ բանական մոտեցումով անհնարին է բացատրել այն փաստը, թե ինչպես է, որ հուսահատված ու հուսալքված աշակերտները, որ ձկնորսներ էին, անուս և անգետ մարդիկ, հանկարծ վերափոխվեցին քրիստոնեության նախանձախնդիր քարոզիչների, ովքեր ավետիսը տարան համայն մարդկությանը աշխարհի չորս ծագերում և առանց պետական իշխանության միջամտության ու թույլտվության, հալածանքների ու բռնությունների պայմաններում, մինչև իսկ դեպի մահ ընթանալով և իրենց մահկանացուն կնքելով նահատակությամբ, մշտապես կարողացան հաստատուն կերպով քարոզել ամենուր, թե՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Անհնարին է բացատրել այս պարագան այլ կերպ, քան միայն այն ճշմարիտ զգացումով և ըմբռնողությամբ, թե իրապես Քրիստոս հարություն էր առել մեռելներից: Ուրիշ որևէ մի ձևով հնարավոր չէր, որ առաքյալներն այդպիսի ոգեշնչում, այդպիսի նվիրում ունենային՝ տարածելու համար Քրիստոսի Ավետարանի սրբարար լույսը համայն մարդկությանը: Ուստի թեև երկու հազար տարիներ շարունակ բազմաթիվ մարդիկ փորձել են չընդունել Քրիստոսի հարության իրականությունը, սակայն մշտապես այն կա, կհնչի և շարունակելու է հնչել, որովհետև իրապես պատմության մեջ եղել է այդ փաստը, և այդ իրողության վկան է Քրիստոսի թափուր գերեզմանը, վկա է նաև Դամասկոսի ճանապարհին դարձի եկած Պողոս առաքյալը, որ հայտարարում է, թե «եթե Քրիստոս հարություն չի առել, ընդունայն է ձեր հավատքը, ընդունայն է նաև մեր քարոզությունը»: Սակայն ո՛չ, Քրիստոս հարություն է առել որպես անդրանիկը մեռելներից և բոլորիս կյանք է պարգևել:

Քրիստոսի հարությունը եղել և մնում է այն լուսավոր կովանը, այն հանգրվանը, որտեղ անսահմանափակը հանդիպում է սահմանափակին և անժամանակը՝ ժամանակավորին: Դեռ ավելին: Այդ շփումով, այդ մերձեցումով ժամանակավորը դառնում է անժամանակ և սահմանափակը՝ անսահմանելի, քանզի Քրիստոսի հարությունից հետո է, որ Քրիստոս մարդը դադարում է ժամանակի մեջ լինելուց և քայլում է հավիտենության ու հավերժության մեջ, ինչպես երկու հազար տարի առաջ, Նրա ներկայությունը նույնքան իրական է նաև այսօր: Այդպես Քրիստոս մարդը, որ սահմանափակ, մահկանացու մարմին էր ստացել, հարությամբ պատռում է այդ սահմանափակությունը և կարողանում է ցանկացած պահին տիեզերքի ցանկացած անկյունում Իր իրական ներկայությունն ապահովել: Սա այն իրողությունն է, որին հավատում են աշխարհի համար քրիստոնյաներն ինչպես երեկ, այնպես էլ այսօր:

Սակայն ընդամենը Քրիստոսի հարությունն ընդունելը, հավատալը, հասկանալը, թե իրոք, երկու հազար տարի առաջ այդպիսի դեպք է պատահել, բավական չէ ճշմարիտ քրիստոնյա կոչվելու համար, քանզի, Ավետարանի խոսքերով իսկ ասած, դևերը նույնպես հավատում են, բայց նրանց այդ հավատքով փրկություն չկա: Քրիստոսի հարությունը չի պատկանում սոսկ անցյալին որպես պատմական իրողություն, չի պատկանում նաև միայն ապագային՝ իբրև յուրաքանչյուրիս համար հարության հույս, այլ նա գոյություն ունի որպես մշտական, հավիտենական մի ներկայություն, որը տարածվում է անծայրածիր ժամանակի հարթության մեջ և որպես այդպիսին յուրաքանչյուր մարդու ունի իր ասելիքը, ունի իր հրամայականը, և յուրաքանչյուր մարդու համար նույնքան իրական է Քրիստոսի հարությունը, որքան իրական են Քրիստոսի խաչելությունը, թաղումը, քանզի յուրաքանչյուրի համար պետք է իրական ներկայություն դառնան Ավետարանական Ավագ շաբաթվա բոլոր իրադարձությունները:

Ըստ այդմ, որևէ մեկն իրավունք չունի մտածելու և զարմանալու, թե ինչպես Հուդան, որ առաքյալներից մեկն էր, կարողացավ մատնել իր Փրկչին, թե ինչպես այդ ամբոխը, որին երեք տարի քարոզել էր Քրիստոս, բժշկել էր, անդամալույծներին առողջություն էր տվել, կույրերին՝ տեսողություն, համրերին՝ խոսելու ունակություն, կարողացավ ընդունականալ և ի տես այդ գեղեցիկ անմեղության գոռալ Պիղատոսի առջև, թե՝ «ի խաչ հան զդա»: Նույնքան նաև զարմանալի պետք չէ համարել, որ առաքյալները թողեցին ու փախան:

Այդ իրողություններն այսօր էլ յուրաքանչյուրիս համար իրական ու ներկա կարող են լինել, քանզի եթե մենք, առօրյա նյութականի հետևից ընկած, չենք նվիրաբերում մեր ժամանակի մի փոքրիկ մասը՝ տոնելու Քրիստոսի հրաշափառ հարության այս ավետիսը, այլ շահադիտական նպատակներով մամոնա ենք դիզում, հետևաբար մենք նույնպես կամակից ենք լինում Հուդա Իսկարիովտացուն, որը գնաց և երեսուն արծաթի համար մատնեց իր Տիրոջը:

Եթե մենք շարունակում ենք մնալ որպես ամբարտավան ու գոռոզ ադարածներ, չենք ցանկանում տեսնել այն լավն ու բարին, որ անթեղված են մարդկային հոգում և, ի տես բարության, մեր մեջ չարություն ու նախանձ է ծնվում, մենք նույնպես կամակից ենք այն ամբոխին, որ գոռում էր. «ի խաչ հան զդա»:

Եթե շարունակում ենք մեր մեջ պահել այն աստվածային նկարագրական բոլոր գծերը, որոնցով մարդն իրապես մարդ է լինում, ուրեմն մենք դեռևս չենք լսել Քրիստոսի հարության ավետիսը, և դեռևս մեր հոգիներում Քրիստոս խաչված է:

Եթե մենք մեր սրտի վրա դրել ենք ավելի ծանր մի վեմ, քան Քրիստոսի գերեզմանի վրա դրված կափարիչն էր, և որն ուրիշ բան չէ, եթե ոչ «մեղք» կոչված այն իրողությունը, որն ախտահարել է մեզ և ձեզ բոլորիդ, եթե դեն չենք նետում մեր սրտի վրայից այս վեմը, ուրեմն մեր հոգիներում դեռևս Քրիստոս թաղված է:

Ուրեմն, սիրելի եղբայրներ և քույրեր, Ճրագալույցի այս Սուրբ Պատարագի ժամանակ ուրիշ բան չենք անելու մենք, եթե ոչ գոնե այժմ, գոնե այս պահին մեր հոգիներից ներս իրական ներկայությունն ունենանք Քրիստոսի հրաշափառ հարության, դառնանք իրական աշակերտներն ու առաքյալները, նաև նախանձախնդիր քարոզիչները Քրիստոսի հարության: Մի կողմ գլորենք յուրաքանչյուրիս սրտին դրված այդ մեղքի ծանր վեմը, որպեսզի իրոք մեր հոգիներից ներս Քրիստոս հարություն առնի իր հրաշափառ ավետիսով, մշտանորոգ ներկայությամբ ու կենսատու առկայությամբ, որպեսզի այստեղից հեռանալով, գնալով մեր օջախները, իրոք, ամենայն անկեղծությամբ և ամենայն համոզվածությամբ, այլ ոչ թե սոսկ ազգային կամ կրոնական օրենքին տուրք տալով, մեկս մյուսին ողջունենք՝ ասելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: